Արձանագրություն N 3

ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Ալավերդի

03.11.2019թ.
Ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ) | Ա.Վարոսյան |
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) | Վ. Մինասյանը, Հ.Նազարյանը |
| Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) | Հ. Շալաղոյան, Կ.Կոնինյանը |
| Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Լ.Քառյանը |

1. ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

1.1. ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստ անց է կացվել 2019թ. դեկտեմբերի 3-ին, ժամը 14:00-ին Ալավերդու համայնքապետարանում, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1 հասցեում:

2. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ

---

(Ա.Վարոսյան)

2.1 ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն: Ըստ որի, նախնական տվյալներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԷԼԴԱՎՇԻՆ» ՍՊԸ–ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, սակայն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

3. «ԷԼԴԱՎՇԻՆ» ՍՊԸ–ի կողմից էլեկտրոնային ձևով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում, սակայն լիարժեք չեն (բացակայում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրի, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը):

4.Հանձնաժողովը որոշեց.

4..1 ՀՀ Կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 47-րդ կետի և ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի 7.18-ի համաձայն՝ նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով և առաջարկել «ԷԼԴԱՎՇԻՆ» ՍՊԸ-ին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

5.1 ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/19 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա շտկված փաստաթղթերի տրամադրման հաջորդ աշխատանային օրը, ժամը 14:00-ին, Ալավերդու համայնքապետարանում, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ Կողմ-5,Դեմ-0:

Հանձնաժողովի.

*Հանձնաժողովի.*

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ) | | Ա.Վարոսյան |
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) | | Վ. Մինասյան |
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) | | Հ.Նազարյան |
| Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) | | Ա. Շալաղոյան |
| Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) | | Գ. Կռնինյան |
| Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀՄ) | | Լ.Քառյան |